

370.1
U-68



26
11 MAR 2010
974

Ն. ՍՕԿՈՒՈՎ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ- ԹԵԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋԸ

(Արտատպած «ԼՈՅՍ» շաբաթաթերթից)

Փոխադրեց
Նիկողայոս քն. Բոմնակեան

SSSSSS

Նոր-Նախիջևան
ՏՊԱՐԱՆ Ս. Յ. ԱԲԱԿՈՎԱՆԻ.

4/303.
Нахичевань на Дону
Тип. С. Я. АВАКОВА.

1912

Հ. 3-439a

370.1

u-68

Ն. ՍՕԿՈԼՈՎ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-
ԹԵԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՋԸ

(Ս. Երաստյան «ԼՈՅՍ» շաբաթաթերթից)

Փոխադրեց

Նիկողայոս քհն. Բոսնակեան



Նոր-Նախիջևան
Տղարան Ս. Յ. ԱՆԱԳԵԱՆԻ.

Нахичевань на Дону
Тип. С. Я. АВАКОВА.

1912

1793

01 AUG 2013

45.299



40650-63

ԲԱՐՈՅԵԿԱՆ ԳԼՍՏԻԲՐԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋՐ

I

Բնածին բարոյական սկզբունքներից, հա-
կունքներից, ընդունակութիւններից ու ձիրքերից
յետոյ, տպաւորութիւնները մեր բարոյական
զարգացման համար առաջին հիմքն են կազմում:
Տպաւորութիւնը—այդ այնպիսի հսկայական ոյժ
է, որ ազդեցութեան այս կամ այն տեսակի հա-
մեմատ, մարդուն լաւ, կամ վատ է դարձնում:

Տպաւորութիւնների արատասովոր ոյժի օ-
րինակները մենք յաճախ մեզ մօտ ենք տեսնում:
Մարդս, աշխարհ գալով, լիովին հպատակում է
իրան շրջապատող միջավայրի ազդեցութեան:
Եթէ նա վայրենիների մէջ է ծնւում—վայրենի է
դառնում, կրակապաշտների մէջ—կրակապաշտ,
հրէաների մէջ—հրէայ, կվակիւնների*) մէջ կվա-
կեր և այլն և այլն:

Շրջապատող միջավայրի կենցաղավարու-
թեան տեսակը, նրա համոզմունքներն ու հաւա-
տալիքները վերարտադրում է իր տպաւորու-
թիւնները մարդու մտաւոր կեանքի վրայ, և նա

*) Ազանդաւորներ, Անգլիկացիներ:

այս կամ այն կերպ է դառնում, նայելով թէ նրա վրայ անդրադառնող տպաւորութիւնները ինչ են բովանդակում իրանց մէջ:

Մենք մեր հասակի առաջին ժամանակաշրջանը հայրենիքի տպաւորութիւնների տակ ենք անցկացնում, և այդ պատճառով, նրա հետ կապում ենք մի այնպիսի սիրով, որ արտասահման գնալով շատ անգամ հայրենիքի կարօտն ենք քաշում, մենք այդպիսի ժամանակ դգում ենք, որ մեր սիրալ որպէս թէ կտրուած է հայրենիքի տպաւորութիւններից և ամեն մի յարմար դէպքում խռոված հոգով ուղղում ենք մենք մեր միտքը դէպի հայրենի երկիրը:

Բայց թող մեզ մեր մանկութեան հասակում տեղափոխեն մի այլ երկիր և մենք կապուած կը լինինք այն երկրի հետ, որի տպաւորութիւնների տակ ենք անցկացրել մեր մանկութիւնը, պատանեկութիւնը ու երիտասարդութիւնը: Դիցուք մենք ապրում ենք կրթութեամբ հասարակութեան մէջ, բայց եթէ ճակատագիրը մեզանից որ և է մէկին ձգէ չուքչիւների կամ խօնխուզների մէջ, և մենք եթէ չունենանք հաղորդակցութիւն քաղաքակրթութեամբ մարդկանց հետ, չունենանք ոչ գրքեր, ոչ դասական պատուքներ, այն ժամանակ կոպիտ տպաւորութիւնների ճշման տակ սակաւ առ սակաւ կը փոխուենք և երկար կամ կարճ ժամանակ անցնելուց յետոյ պէտք է նմանենք իսկական չուքչիւներին ու խօնխուզներին, ընտելանալով նրանց լեզուին, զբաղմունքներին ու սովորութիւններին:

Ծեր մարդիկ, որոնք քիչ կարգացող են և

ապրում են հին կարգերի տպաւորութիւնների տակ, մեծ մասամբ այդ բանով այնպէս են տուգորւում, որ բոլոր նոր կարգերի մէջ միմիայն քնաս են դառնում, վճռականապէս զգաւոր են տաժում դէպի նրանց և աշխատում են ընդդիմադրել նրանց անողորմ քննադատութիւնով:

Գիտնական մարդիկ էլ նոյնպէս ազատ չեն մնում միւլենոյն տպաւորութիւնների ազդեցութեան ոյժից: Գիտնականը երկար ժամանակ գտնուելով իր ընտրած մասնագիտութեան, իր գիտական առարկայի գերիշխող ազդեցութեան տակ, երբեմն այն աստիճան նուիրում է այդ առարկային, որ և չի նկատում թէ ինչպէս ինքը սակաւ առ սակաւ ընկնում է միակողմանիութեան մէջ և իր մասնագիտութիւնը գերադասում է մնացած բոլոր գիտութիւններից: Օրինակի համար, այն մարդը, որ գլխաւորապէս պարապում է մաթեմատիկայով, կասէ՝ թէ մաթեմատիկան առաւել կարևոր, առաւել օգտակար և առաւել անհրաժեշտ գիտութիւն է. պատմաբանն էլ այդ կերպով մասնանշ է անում պատմութեան վրայ: Ընադէտն էլ—ընագիտութեան վերայ և այլն, Այս կամ այն գիտական առարկայի՝ գիտնականների վերայ ունեցած ազդեցութեանը առաւել լաւ ապացոյց կարող է լինել Էդվարդ Իւմանսի անգլիական պրօֆեսորների յօդուածներից կազմած գիրքը (Թարգմանութեամբ 1867 թ. ռուս. լեզ. Անտոնովիչի ձեռքով): Այս ժողովածուից երևում է, որ պրօֆեսորներից իւրաքանչիւրն աշխատում է ցոյց տալ զաստիարակութեան միջոցին մտքի զարգացման վերայ ունեցած իրանց աւանդած առարկայի աներկբայի օգուտը և

բոլոր կարեւորութիւնը. այդ իմաստով և խօսուած է Տենդայլը բնագիտութեան, Հենֆրին—բուսաբանութեան, Հօտսոնը—տնտեսական գիտութիւնների մասին և այլն:

Մի խօսքով, մեզ շրջապատող տպաւորութիւնների ոյժի զօրութիւնը անվիճելի է. հէնց այդ պատճառով էլ բարոյականութեան ու անբարոյականութեան զարգացման համար առաջին հիմքն ամբողջովին կախումն ունի այդ տպաւորութիւնների տեսակից և նրանց քանակութիւնից: Եթէ չը փչացած մարդու՝ նրա կեանքի առաւել կամ պակաս շարունակուող ժամանակաշրջանի ընթացքում պատահող բարոյական տպաւորութիւնների գումարն և ոյժը զգալի կերպով կը գերազանցեն անբարոյական տպաւորութիւնների գումարին և ոյժին, այն ժամանակ, այդպիսի մարդը հաւանական է, որ կը լինի աղնիւ ու բարոյական մարդ, գոնէ մինչև պատահող տպաւորութիւնների տեսակի փոփոխումը (կարող են լինել միմիայն եզակի բացառութիւններ.) և ընդհակառակն, ընդդէմ բարոյական անբարոյական տպաւորութիւնների քանակականը գերազանցելու դէպքում, որոնք ազդում են մարդու վերայ, յոյս չըկայ նրա բարոյական ուղղութեանը, նամանաւնդ, որ անբարոյական տպաւորութիւնները կարող են ունենալ մարդու վերայ առաւել ուժեղ ազդեցութիւն, քան թէ բարոյական տպաւորութիւնները. որովհետեւ, առաջինները շողոքորթում են ցանկութիւնները, խրախուսում են եսակառութիւնը և վատ հակումները, այն ինչ, բարոյական տպաւորութիւնները ոչ միայն չունին այդպիսի առաւելութիւններ,

այլ ընդհակառակը, պահանջում են անձնագոհութիւն կամ անձնուրացութիւն, որոնք բարոյականի կողմից միայն հաճելի են, որպէս հանգստացնող և պարտքը կատարող զգացմունք:

Որոշակի կերպով կարելի է ասել, որ հազար տեսակ բարի օրինակները և կամ բարոյական տպաւորութիւնները կարող են ոչնչացնել հարիւր վատ և անազնիւ օրինակներ և ընդհակառակն, այս վերջի հազար օրինակներն ի հարկէ ոչնչացնում են բոլոր տպաւորութիւնները, որ մնացած են մարդու հոգու մէջ հարիւրաւոր լաւ ազդեցութիւնների և լաւ տպաւորութիւնների շնորհիւ՝ հէնց այդպէս էլ, ինչպէս դաշտը, որ ցանուած է 10 կամ 20 անգամ աւելի հացահատիկներով, քան ֆլասակար բոյսերով, կը տայ մեզ հաց, մինչդեռ եթէ նոյն չափով հակառակը ֆլասակար բոյսեր ցանուած լինի, մենք կունենանք առատօրէն միմիայն վատ բոյսեր, բայց ոչ հաց:

Երբ բարոյապէս փչացած հասարակութեան մէջ երեւում են նոր անդամներ և անբարոյական տպաւորութիւնները պաշարում են նրանց ամեն կողմից, այն ժամանակ հնարաւոր է արդեօք նորակներին չը վարակուել նոյն հիւանդութիւններով, որոնցմով տառապում է փչացած հասարակութիւնը: Կարելի է արդեօք անազնիւների մէջ մտալով անազնիւ չըլինել հէնց այնպէս, ինչպէս որ ծնուելով հրէաների և հնդկների մէջ չը լինել հրէայ կամ հնդիկ: Եթէ այդ անկարելի է, ուրիմն ճիշտը որոնենք փրկութիւն: Այն ժամանակ կարելի է յոյս դնել միմիայն գիտական կրթութեան վրայ: Բայց միմիայն գիտական

կրթութիւնը դեռ բաւական չէ հասարակութեան մէջ բարձրացնելու համար բարոյական դադարը, առաւել կամ պակաս գոհացուցիչ աստիճանի վրայ. գիտական կրթութիւնը՝ որքան էլ նա բարեբեր լինի, որքան էլ բարոյական դարգացման միջոցին մեծ բարոյական սկզբունքներ ցոյց տայ, այնքան էլ նա կը ծառայէ զարգացման բացակայութեան միջոցին առաւել խարդախ և անազնիւ գործերի. կրթուած չարագործը աւելի հեշտութեամբ կարող է թագցնել իր ոճրագործութիւնները հետքերը, քան սակաւ զարգացած ու կրթուած չարագործը:

Առհասարակ դրանից յետոյ ինչ որ մենք տեսնում ենք մեր շուրջը, միթէ կարելի է յուսալ մարդկային բարոյական զարգացման յառաջադիմութեան վրայ: Միթէ դա իզուր յոյս չէ:

Ոչ, այդպիսի յոյսը իզուր չէ: Եթէ իսկապէս ցանկութիւն ունենանք վճռելու ամենազլխաւոր հարցը, այսինքն բարոյականութեան, երբէք անտարբեր չպիտի մնանք մենք. ընդհակառակն այդ հարցի նկատմամբ հարկաւոր է ամենալուրջ ուշադրութիւն դարձնել, և հարկաւոր է անդադար զբաղուել, և պէտք չէ հանգիստ մնալ ոչ մի վճռի վրայ մինչև այն ժամանակ, քանի որ այդ վճռի կանոնաւորութիւնը ակներև չի դարձել գործնականի մէջ:

Թէև մարդու կեանքի ուղղութիւնը և նրա մտածելակերպը ամենից առաջ կախուածն ունին, ինչպէս որ արդէն ասուած էր, մարդու վրայ ազդող տպաւորութիւնների ոյժից և քանակութիւնից՝ բայց կայ միջոց թուլացնելու, իսկ յետոյ բոլորովին արմատախիլ անելու փչացած

հասարակութեան ունեցած վատ ազդեցութիւնը նոր անդամների վրայ: Մարդկային բարոյական զարգացման գլխաւոր հիմքերն են նրա ինքնաճանաչութիւնը, և քննադատական վերաբերմունքը դէպի իր գործունէութիւնը և կեանքի մասին խորհելը: Ի հարկէ այստեղ խորհել խօսքը պէտք է հասկանալ իր իսկական իմաստով. եթէ մտքերը մեքենայական բնոյթ ունին, խորը չեն թափանցում, այլ և մտածած առարկայի մասին հարեանցի կերպով են վերաբերում, ինչպէս ջրի վրայի չոր տերեւներ, այդ դէպքում այդպիսի թիթի մտքերը արտայայտուած թէ գրաւոր և թէ բերանացի—ոչ մի տպաւորութիւն չեն գործում: Այդ իսկ պատճառով է, որ դպրոցական հիմնարկութիւնների մէջ ուսուցիչների ու վերակացուների բոլոր բարոյախօսութիւնները գրեթէ յաջողութիւն չեն ունենում: Բայց մենք խօսում ենք այնպիսի մտածմունքի մասին, որը որոշ հասակում մտքի մէջ խորը թափանցելով ստիպում է խորհել և ըստ այնմ առաջացնել դատողութիւն ու եզրակացութիւն: Այդպիսի մտածմունքները առանձնապէս միացած կեանքից առնուած դատողութեան և օրինակների հետ, կազմում են ամենամեծ ոյժը և գլխաւոր հիմունքը բարոյական համոզմունքներ յարուցանելու խընդրում:

Կեանքի մասին մտածմունքը զարգացնելու համար պէտք է աչքի առաջ ունենալ կանոնաւոր կեանքի դադափալը և ըստ այնմ դատել մեր բոլոր վարմունքերը: Այս դադափալը շատ պարզ է. և պէտք է ձգտել իրականացնելու բրիստոնէական իմաստով այն ամենը, ինչ որ բանական է—

խելացի, լաւ, ազնիւ և արդար: Այս ուղղութեամբ մտածմունքը զարգացնելու համար առաջի պայմանն է գիտակցել, որ անհրաժեշտ է, որքան կարելի է յաճախ դառնալ դէպի այսպիսի մտածմունքը:

Սակայն այդպիսի պայմանը հասարակութեան մեծամասնութեանը անհասկանալի է:

Օրինակի համար, մաթեմատիկայով երկար պարապելը անհրաժեշտ է՝ պէտք է իւրացնել նրա բոլոր ձևերը, իսկ այդ, պահանջում է յաւատեալ աշխատանք. լեզուներով երկար պարապելըն էլ նոյնպէս անհրաժեշտ է, իսկ լեզու սովորելու համար էլ հարկաւոր է անընդհատ յիշողութիւն: Բայց ինչո՞ւ համար երկար խորհել կամ յաճախ մտածել այդպիսի պարզ ճշմարտութեան մասին, թէ հարկաւոր է ձգտել իրագործելու ամեն լաւ, ազնիւ և արդարացի բաները: Ինչո՞ւ ուրիմն այդ ամենի մասին շարունակ խորհել, երբ այդ օրինակ ճշմարտութիւնները այդքան հասկանալի և պարզ են մեզ համար:

Այդպիսի առարկութիւնները ցոյց է տալիս միայն հայեացքի արտաքին կողմը նրա հոգեբանական տեսակէտից, որը բնաւին չի վերաբերում հարցի խորութեանը:

Կեանքը դարձել է չափազանց բարդ ու չափազանց զանազանակերպ: Բազմաթիւ նիւթական կարիքների և առօրեայ զբաղմունքների մէջ էլ նա հրապոյրների, վատ ազդեցութիւնների ու կեղծ հասկացողութիւնների մէջ է փաթաթուած մեզ: Եթէ մենք շարունակ մտածելու լինենք և յաճախ դառնալու լինենք դէպի նա, թէ պէտք է կանոնաւոր ապրել, այն ժամանակ այդ միտքը

կը լինէր մեզ համար ամեն տեսակ վատ բաներից մասամբ պահպանող մի բան: Նա պիտի յիշեցնէ մեզ մեր պարտաւորութիւնները— ջանալ լինելու ամեն բանի մէջ ազնիւ և արդարացի: Եթէ մենք շարունակ այդպիսի մտքի պահանջի համեմատ վարուելու չլինենք, այն ժամանակ նա կարծես մեր անազնիւ վարմունքի դէմ պիտի բողոքէ: Ահա թէ ինչո՞ւ համար կանոնաւոր կեանքի միտքը պէտք է լինի իշխող մեր միւս մտքերի վերայ. իսկ եթէ մենք կամենանք նրան իշխող դարձնել, անհրաժեշտ է յաճախ դառնալ դէպի նա, այլապէս, նա կը խուսափէ մեզանից և կանհետանայ միւս ուժեղ մտքերի մէջ, որոնք այնքան էլ անհրաժեշտ չեն կանոնաւոր կեանքի համար: Այստեղ կարելի է այսպիսի համեմատութիւն անել: Երբ մետաղեայ տախտակի վրայով քաշինք մի քանի անգամ մի որևէ գիծ, այն ժամանակ այդ գիծը հազիւ նկատուի կը լինի. բայց երբ նոյն գիծը մենք շարունակ քաշելու լինենք, այդ դէպքում մետաղեայ տախտակը, չընայելով իր ամրութեանը, սակաւ առ սակաւ կենթարկուի մեր զբաղմունքին և վերջապէս կը կազմէ այնպիսի աղօս, որ արդէն յայտնի կը լինի միւս գծերի մէջ, եթէ մենք նրանց վրայ էլ գործ չը դնէինք նոյն յամառ աշխատանքը:

Կեանքի կանոնաւորութեան իմաստի հետ կապուած է մի ուրիշ առաւել կարևոր հարց. ի՞նչպէս պիտի վարուել ներկայ դէպքում, որ ոչ թէ միայն ուղիղ դուրս դար մեր անձնական տեսակէտից երբ մեզ վրայ յաճախ իշխում են անկանոնութիւնը, կրքերը, վատ հակումները, այ-

լև հանրամարդկային քրիստոնէական տեսակէ-
տից, այսինքն, բարութեան, արդարութեան և
սիրոյ:

Ամենից առաւել այս հարցի ուղիղ վճիռը
կարող է ստացուել միմիայն խորհրդածութեան
միջոցով: Միմիայն այս խորհրդածութիւնը, որի
մէջ մենք ջոկում ենք բոլոր թեր և դէմ և հնա-
բաւոր եղած բոլոր հետեանքները, պարզաբանում
են կեանքի հարցերը և տանում են առաւել խե-
լացի վճռի: Մեր կեանքի իդէալի տեսակէտից
որքան աւելի յաճախ ուշադրութեամբ հետեւնք
մեզ, և այն ամենին, որ կատարւում է մեր շուր-
ջը, այնքան աւելի ազատ կը մնանք ապակա-
ռած միջավայրի ազդեցութիւնից, որի անպէտք
կողմը մեր առաջ պիտի կանգնի իր բոլոր այ-
լանդակ կերպարանքով, մանաւանդ, երբ համո-
զուենք ինքնուղղութեան անհրաժեշտութեան մէջ:

Բայց միթէ հնարաւոր է այդքան բազմա-
կողմանի գործերի մէջ հարկադրել մեզ յաճախ
մտածելու կանոնաւոր կեանքի մասին, որպէս զի
դրա միջոցով որքան հնարաւոր է առաւել հե-
տեւել նրա սկզբունքներին:

Այդ հարցը կարելի է վճռել մի շատ հա-
ճարակ միջոցով: Մեր մէջ այդ մտքերը ծագում
են կամ իրանք իրանց, կամ որևէ առիթի և
կամ ստացած տպաւորութիւնների շնորհիւ: Ե-
թէ այդ առիթները ծագում են մի որ և է ա-
ռարկայի մասին մտածելու դէպքում, այն ժա-
մանակ այդ առարկայի մասին կը ծագեն մըտ-
քեր և բազմակողմանի կերպով մտածած հարցը
կը լուսաբանեն: Եթէ մտածելու առիթներ չը
կան այդ առարկայի մասին, այն ժամանակ ին-

քըն իրան ոչ մի միտք երբէք չէ կարող ծագել:
Երբ օրինակի համար, մենք լսում ենք ընթեր-
ցանութիւն կամ մի պատմութեամբ, մեզ անհա-
րին կը լինի չը մտածել այդ ընթերցանութեան
կամ պատմութեամբի բովանդակութեան մասին,
եթէ մենք առանձին միջոցներ ձեռք առած չենք,
որպէս զի ոչինչ չը լսենք, կամ ոչ մի ուշա-
դրութիւն չը դարձնենք ընթերցանութեան վրայ:
Ուրիշների կամքի ակնյայտնի լինելը՝ որով հար-
կադրում են մեզ մտածել այն բանի մասին ինչ
որ իրենք են կամենում—պարզ կերպով հաս-
տատուում է դէպի մեզ ուղղած հարցերի միջո-
ցաւ: Երբ մեզ մի որ և է բանի մասին հարցնում
են, այն ժամանակ կամայ-ակամայ մենք պէտք է
մեր ուշադրութիւնը կենդրոնացնենք նրանց վը-
րայ և ըստ այնմ պատասխան տանք:

II.

Բարոյական զարգացումը չը պէտք է հաս-
կանալ այնպէս հարեանցօրէն, ինչպէս որ հասա-
րակութեան մեծամասնութիւնը սովոր է հասկա-
նալ. բարոյապէս զարգացած կարող են համա-
րուել միայն այն մարդիկ, որոնք աշխատում են
բարոյական սկզբունքները իրականացնել կեան-
քի մէջ, իսկ նրանք, որոնք չեն մտածում խու-
սափել եսականութիւնից, հպարտութիւնից, ան-
փառութիւնից, որոնք թոյլ են տալիս իրանց
յայտնի կամ ծածուկ կերպով անաղիւս վար-
մունքներ, — այդպիսիները չեն կարող համարուել
բարոյապէս զարգացած մարդիկ, թէպէտ և ստա-
ցած լինէին լաւ կրթութիւն ժամանակի ոգու
համեմատ՝ անցած լինելով ամեն տեսակի դիտու-

թիւններ և ունենալով ուղիղ հասկացողութիւն ճշմարիտ բարոյականութեան մասին:

Այդպիսի բարոյական զարգացում ձեռք բերելու համար, որ երևան դար ոչ միայն խօսքի մէջ այլ և գործի՝ պէտք է բարոյական համոզմունքներ ունենալ. իսկ այդ համոզմունքները իւրացւում են շնորհիւ այն երկու սկզբունքների, որոնց մասին մենք ասացինք.— շրջապատող միջավայրը և ինքնաճանաչութիւնը, կամ խորհելը մեր կանոնաւոր կամ անկանոն վարմունքների մասին: Բայց որովհետեւ առաջին սկզբունքը, այսինքն մեզ շրջապատող միջավայրը, իր ապականութեան պատճառով մեծ մասամբ չէ կարող մեր բարոյական զարգացման օրինակ լինել իսկական իմաստով, ուրեմն մարդու դաստիարակութեան միջոցին պէտք է օգտուել երկրորդ սկզբունքով, այսինքն կեանքի մասին նրան խորհել վարժեցնելու բարոյական տեսակէտից:

Ընդհանրապէս եթէ մեր խորհրդածութիւնները զբաղուած լինէին առաւել որեւիցէ մասնագիտական կամ գիտական առարկաներով, ի նկատի ունենալով միմիայն մեր գոյութեան նիւթական շահերը, կամ այսպէս ասած, եթէ մենք բարոյական հարցերով զբաղուելու ոչ առիթ ենք ունեցել և ոչ էլ յարմար դէպք. մեր վարմունքները չենք քննել, մեր սխալների առաջ չենք կանգ առել և մեր կեանքը, մեր գործունէութիւնը չենք բարձրացրել դէպի մարդկային արժանաւորութեան բարձր գաղափարները, այն ժամանակ, մենք թէև որ և է զբաղմունքի մէջ ներկայանալիք որպէս մասնագէտ կամ գիտնական, այնուամենայնիւ, բարոյական իմաստով դարձեալ

կը մնայինք անզարգացած, և տա տղ պատճառով էլ անազնիւ լինելու վտանդին կենթարկուէինք:

Թէև այս տեսակ եզրակացութիւնը շատերի համար անհասկանալի է թւում. հնարաւոր է արդեօք բազմակողմանի գիտական զարգացում ու ահագին գիտութիւնների ունեցողի համար չունենալ բարոյական զարգացում. բայց ընդհանուր օրէնքն այդպէս է. եթէ մեր մտքերը բարոյականի տեսակէտից քիչ են զբաղուած, այն ժամանակ նրանց զարգացումն էլ աննշան կը լինի:

Այդ խորհրդածութիւնների համաձայն բարոյական յայտնի ճշմարտութիւնները կանոնաւորապէս կեանքի մէջ գործադրելու համար հարկաւոր է այնքան հրկար զբաղուել, կամ այնքան շարունակ կրկնել, որ կարողանար նա համոզմունքներ մշակել և անհրաժեշտ դարձնելու այդպիսի գործադրութիւնը ազգէր կամքի վրայ. և կամ ուրիշ խօսքով յարմարաւոր դէպքում գործնականի մէջ իրականացնէր այդ համոզմունքները: Իսկ եթէ այդ օրինակ խորհրդածութիւնները բաւարար չեն համեմատած միւս մասնագիտական կամ գիտական խորհրդածութիւնների հետ և կամ նրանք երկար ժամանակ չեն կրկնուած, այն ժամանակ այդ գիտական զբաղմունքները կարող են ճնշել իրենց բազմութեամբ մեր բնածին բարոյական սկզբունքները և անկարելի դարձնել դրանց իրականացումը: Ինչպէս օրինակի համար ըստ մեծի մասին զանազան մտքերով զբաղուելը կարող է անդրադառնալ մեր գործունէութեան վրայ և ճնշել այն մտքերը, որոնցմով մենք սակաւ էինք զբաղուել՝ այլ և

որը շարունակ փորձում ենք մեզ վրայ, եթէ ուշադրութեամբ հետևում ենք մեզ. ահա և այդ օրէնքին, որպէս պատմական մեծագոյն փաստ, կարող է ծառայել Ֆրանցիակ Բէկոնը: Ու՛մ յայտնի չէ նրա ահագին, կարելի է ասել, դարաւոր գիտական ծառայութիւնները: Այն ինչ, այդ անդու գիտական և պաշտօնական դրաղմունքները, որոնց միջոցին կարելի է ասել, որ նա բաւականաչափ ժամանակ չէր գտնում խորասուզուել իր մէջ և քննադատել իր վարմունքները՝ նրանց ուղիղ կամ սխալ լինելու նկատմամբ, այդ պատճառով էլ նա բոլորովին սաւը և անտարբեր մնաց իր բարոյականի վերաբերմամբ:


Ընդհանրապէս բարոյական գաղափարներին հասնելու համար մարդուն նոյնքան անհրաժեշտ է զբաղուել իր բարոյականի նկատմամբ, որքան անհրաժեշտ է զբաղուել առօրեայ գործերով: Բայց նուիրելով մեր բոլոր ժամանակը վերջին զբաղմունքներին, մենք հէնց դրանով կը ոչնչացնենք կամ կը նուազեցնենք մեր բարոյական և բնական սկզբունքների գրգիռները. ուրեմն, եթէ մենք զբաղուելու լինենք մեր առօրեայ գործերով, այդ դէպքում մեր բարոյական կողմը բոլորովին մոռացութեան կը տրուի: Դաւիթ Դարուլէյը իր «Դիտողութիւն մարդու մասին» գրութեան մէջ նկատում է. «Դժուար թէ մի բան կարող լինէր գերազանցել ամբարտաւանութեան, մեծամտութեան, գոռոզութեան և նախանձի՝ որոնք գլխաւորապէս պատահում են նշանաւոր լեզուաբան, մաթեմատիկոս, բնագէտ և մինչև անգամ աստուածաբան պրօֆեսսորների մէջ: Մասնագէտները թաղում են իրանց մարդկութիւնը, ի-

րանց մասնագիտութեան մէջ»:

Այս կամ այն մտքերի քանակութեան տիրապետող օրէնքը միշտ կառավարել է և կառավարում է մարդու գործունէութիւնը:

Այդ օրէնքի բացասական կողմը յայտնուեց և քրիստոնէական կրօնի վերաբերմամբ: Քրիստոնէական կրօնի հիմքն է աւետարանը: Ամենից առաջ աւետարանը պահանջում է իր հետեւողներից՝ սէր առ Աստուած և սէր առ ընկերը: Երբ հարց ծագեց այն մասին, թէ ինչպիսի արժանավայել եղանակով պէտք է պաշտել Ամենաբարձրագոյն Էակին, այն ժամանակ այս հարցի վճռի մասին եղած խորհրդածութիւններից առաջ եկաւ այն, որ աստուածաբանները այլ և այլ կրօնական ծէսերի և արարողութիւնների համար կարգեր ու կանոններ սահմանեցին: Այդ ամենը հասկանալի է. մարդս բաղկացած է հոգուց և մարմնից. այդ պատճառով կրօնական ծէսերն ու արարողութիւններն էլ անհրաժեշտ են: Բայց շատ աստուածաբաններ այնքան զբաղուեցին կրօնական ծէսերի հոգսերով, որ բոլորովին ճնշեցին աւետարանի առ ընկերը եղած սիրոյ գաղափարները: Եւ որովհետեւ Սուրբ գրքի իմաստը հասկանալու և այլն և այլն արարողութիւնները կարգադրելու միջոցին աստուածաբանների մէջ ծագեցաւ մեծ տարաձայնութիւն, այնպէս որ իւրաքանչիւր առանձին հասկացողութեան կողմնակիցները սկսեցին արհամարել, ատել, հալածել, սպանել և այլիկ խարոյկի վրայ ուրիշ հասկացողութիւնների կողմնակիցներին, և այս ամենը յանուն այն Ամենակարող Էակի, որը պահանջում է ոչ զոհ, ոչ ողորմութիւն, այլ հեղութիւն, անյի-

ԼԳ-05905



շաշտրութիւն և սէր առ ընկերը:

Ինկվիզիտորները, ճիզվիթները, անաբապ-տիստները և միւս աղանդաւորները կարող են ծառայել իբր ապշեցուցիչ օրինակներ՝ թէ ինչ ասալիճան դաւանութեան ձեւերի մասին իշխող մտածմունքը մթնոցնում ու կլանում է աւետարանի առ ընկերս ունեցած սիրոյ ոգին:

Ինչպէս մարդկային կեանքի մէջ յայտնի դօրեղ կազմի ազդեցութիւնը գերիշխող է հանդիսանում թոյլ կողմի վրայ, նոյնն էլ կատարւում է աննշան առարկաների մէջ՝ օրինակի համար. եթէ սենեակը մութն է, մենք լուսաւորում ենք ճրագով և խաւարն անհետանում է. կամ եթէ սենեակը ցուրտ է՝ վառում ենք վառարանը, նոյնպէս անհետանում է ցուրտը և այլն և այլն: Մեր կեանքի յարմարութեան և մեր մտաւոր զարգացման համար անհրաժեշտ են գիտական ուսմունք: Գիտութիւնները մեզ համար լոյս, տաքութիւն են և քաղց ու ծարաւ ամօքողներ: Բայց այս ամենի հետ մեզ նոյնպէս անհրաժեշտ է օդ, առանց որի անկարելի է ապրել: Օդը մեզ համար այն բարոյական սահմանն է, այն բարոյական կողմն է, որի զարգացումը ժամանակակից հասարակութեան մէջ անբաւարար է: Ինչպէս որ անհարկին է ապրել մեզ առանց օդի, սիրոյ, բարութեան և ճշմարտութեան, այնպէս էլ անհնարին է ապրել՝ ցածութիւնների ու ամեն տեսակ արատների բաղմութեան պատճառով: Հետեւաբար հարկաւոր է ուժեղացնել այդ բարոյական զարգացման կողմը ինքնաճանաչութեան և խորհրդածութեան միջոցով մարդկային պարտաւորութիւնների նկատմամբ՝ գործադրելով

այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է նպատակին հասնելու՝ հէնց այնպէս, ինչպէս որ մենք ուժեղացնում ենք լոյսը երբ մութն է, ուժեղացնում ենք տաքութիւնը, երբ ցուրտ է, թարմացնում ենք օդը, երբ խեղդող է:

III.

Մարդու դաստիարակութեան միջոցին մեզանում զարոցները սակաւ ուշադրութիւն են դարձնում նրա բարոյական զարգացման վերայ: Կենդրոնացնելով զարոցը իր բոլոր գործունէութիւնը իր սաների գիտական զարգացման վերայ, մոռանում է, որ բոլոր գիտութիւններն ուսանելու դէպքումն էլ մենք ամենից առաջ պարտական ենք լինել մարդ. հետեւաբար, ամենից առաջ պէտք է իւրացնել այն բոլոր համոզմունքները, որոնք անհրաժեշտ են ազնիւ և խելացի գործունէութեան համար: Կեանքը, ճշմարիտն ասած, անընդհատ կռիւ է, հէնց դրա համար մեզ անհրաժեշտ է բարեյաջող դէպքում որքան կարելի է լաւ պատրաստուել այդ կռուի դէմ, մեր նշանակութիւնը պահպանելու և պարտականութիւնները կատարելու մտքով: Դպրոցը գոյութիւն ունի հէնց նրա համար, որ տարածի լուսաւորութիւն, իսկ լուսաւորութիւնը միմիայն գիտական կրթութեան մէջ չէ կայանում, այլ և լուսաւորութեան, այսինքն կեանքի վերայ կանոնաւոր հայեացք ունենալու մէջ: Այս պատճառով, դեռ ուսումնարանում մենք պարտական ենք ծանօթանալ, որքան հնարաւոր է, աւելի լաւ մարդկանց կեանքի հետ, որոնք թէև իրանց

կեանքը անց են կացրել, որ յիտոյ, կարելի լինէր նրանց կեանքի փորձառութիւնից օգտուել և ունենալ ուղիղ համոզմունք կեանքի վերայ: Մինչդեռ մեր դպրոցը, հետամուտ լինելով միմիայն իր կրթական նպատակին, ոչ միայն պարտականութիւն չի համարում հոգալ մատաղ սերնդի բարոյական զարգացման մասին, այլ մինչև անգամ պնդում է յանձին իր բազմաթիւ ներկայացուցիչներին, որ այս սրբապաշտութիւնը իւրաքանչիւր մօր, իւրաքանչիւր հօր վերայ է, այլ ոչ թէ ուսումնարանի:

Իհարկէ հայրն ու մայրը պարտական են հոգալ իրանց զաւակների բարոյական դաստիարակութեան վերայ՝ բայց շատ կը գտնուին արդեօք այդպիսի ընտանիքներ, այդպիսի հայրեր ու մայրեր, որոնք իրանց բարոյական զարգացմամբ կարողանային կատարել իրանց զաւակների բարոյական դաստիարակութեան գոհաւորի գործը: Ընդհակառակը, միթէ մենք չենք տեսնում, որ հայրերի ու մայրերի մեծամասնութիւնը յամառութեամբ մնում են ազիտութեան մէջ իրանց բարոյական պարտաւորութիւնների նկատմամբ: Իսկ կեանքի մասին խորհելու ուրոյն վարդացումը կամ ինքնաճանաչութիւնը տոտանց օտարի օգնութեան կարող է միմիայն պատահել հազուադիւրս դէպքում. հետեւաբար եթէ դպրոցը ուղղակի հրաժարուում է հոգալ իր սանիկների բարոյական զարգացման մասին՝ այն ժամանակ երկուսից մէկն է մնում անել,—կամ այդ կենսական հարցը թողնել ճակատագրի կամքին, կամ փնտրել լուրջ բարոյական հարցի լուծումն առանց դպրոցի. թէև դպրոցում աւանդում է կրօ-

նը, բայց որովհետև նրա ուսուցումը միայն հիմնուած է յիշողութեան վրայ և ոչ թէ ճշմարիտ քրիստոնէական կանոնների խոր գիտակցութեան, այն ժամանակ այդ ուսուցումը չի կարող բերել ցանկալի արդիւնքներ բարոյական իմաստով:

Բայց բարոյական հարցը ճակատագրի կամքին թողնել—միայն այն ենթադրութեամբ, որ հարիւր ընտանիքից հազիւ թէ գտնուին չորս կամ հինգ կրթուած ծնողներ, որոնք առօրեայ գործերի և նրանց մասին անհանգստութիւն պատճառող հոգսերի հետ կապուած չը լինելով, լիովին կարող են հասկանալ դաստիարակութեան գործը և, հետեւաբար, այդպիսի հասկացողութեամբ նրանք ամեն միջոց ձեռք կառնեն իրանց զաւակների բարոյական զարգացման մասին. բայց ներքին չէ: Իսկ եթէ գտնուելու էլ լինին մեր վերեւում յիշած թուի չափ այդպիսի իսկապէս կրթուած մանկավարժ—ծնողներ այն ժամանակ մնացած իննըսունը որովհէտ պէտք է գտնէ ցանկալի գանձը: Դրանից յետոյ, բարոյական հարցը թողնել ճակատագրի կամքին, մենք իզուր պիտի յուսանք, որ պատժական միջոցների վարդացման շնորհիւ կը բարուորենք մեր հասարակական դրութիւնը բարոյական իմաստով: Իսկ եթէ ընդհակառակը մենք կը վճռենք այլ ևս յոյս չը դնել ճակատագրի կամքի վրայ մեր բարոյական յառաջագիմութեան մէջ, այն ժամանակ մենք մնում պիտի դիմենք օգնութեան՝ եթէ ոչ ուսումնարանին: Մինչև այժմ դպրոցում տիրող անտարբերութիւնը դէպի մեր բարոյական դարգացումը չէր կարող չունենալ իր

հետեւանքները: Ստանալով դպրոցում այս կամ այն պետական կրթութիւնը և դրա հետ միասին հալարտ գիտակցութիւն, որ մենք ամեն բան սովորել ենք, որ մենք ամբողջ բարձր ենք, որ մենք մեր դարուն համապատասխան ենք և հետեւաբար մենք անսխալական ենք: Ձեռք բերած բազմաթիւ գիտական փաստերը և սրա հետ միասին դպրոցի կատարեալ անուշադրութիւնը գէպի մեր բարոյական ինքնագիտակցութեան զարգացումը՝ կարծես ճնշում է մեր ընածին բարոյական սկզբունքը. և արդէն միջնակարգ կըրթական հաստատութիւնների մէջ գրեթէ աշակերտութեան մեծամասնութիւնը լինում է յանդուգն, կռաւիտ, հակումն են ունենում գէպի ամենալատ սկզբունքները և բոլորն ցանկութիւն՝ այսինքն մի կերպ շուտով ազատուել ամեն տեսակ խնամակալութիւնից և անցկացնել իրանց ժամանակը առաւել անօգուտ բաների վրայ: Յետոյ ժամանակ առ ժամանակ ամենքի աչքի առջ կըկենտոզ համալսարանական անախորժ գէպքերը չեն կարող չապացուցանել, որ մեր դպրոցի ընդունած միմիայն գիտական կրթութեան սխառեմը դրականապէս գոհացուցիչ է, և մինչև անգամ հակասում է դպրոցի շահերին:

Մենք մեր ուսման ընթացքն աւարտելով ու մտնելով կեանքի մէջ՝ բայց ոչ մի գիտութիւն չիւրացրած ու կեանքի մասին հասկացողութիւն չունեցած, մենք լիովին անձնատուր կարող ենք լինել ճակատագրի կամքին և շուտով դո՛հ դառնալ հէնց տռաշին պատահած դժբախտ գէպքին — վատ բարեկամութիւնների, ցանկութիւնների ու հրապուրանքների, և ընդհանրապէս կը դառ-

նանք ամենաթեթեւ մարդը, իսկապէս նրա համար, որ գիտութիւնների ուսուցման հետ զուգնթացաբար չի գնացել մեր մտաւոր զարգացումը կեանքի ամենագլխաւոր պահանջների համաձայն. իսկ այդպիսի մտածմունքի ծայրայեղ անբաւարարութեան գէպքում, մենք արդէն պատրաստ կը լինենք անձնատուր լինել ամեն տեսակ հրապոյրների, երբէք կանգ չառնելով այն մտքի վերայ, որ այդ հրապոյրը մեզ համար կարող է ունենալ ամենակորստաբեր հետեւանքը:

Բայց ենթադրենք, թէ մեր դպրոցը առիթ պիտի տար մեր նախապէս մտածած ինքնաճանաչութեան կամ կեանքի ամենալաւ նպատակների խորհրդածութեան մասին, այն ժամանակ չի կարելի և մտածել, որ այդ զբաղմունքները օգուտ չը բերէին և չը հասնէին հնարաւորութեան չափ իրենց նպատակին: Այդպիսի զբաղմունքների միջոցին մի կողմից մենք կարող ենք իւրացնել առաւել ուղիղ հասկացողութիւն մարդու ազնուութեան և անձնաւորութեան մասին, միւս կողմից — կարող ենք ծանօթանալ, թէ և մասամբ, այն վատ տպաւորութիւնների և օրինակների հետ, որոնք սոցասում են մեզ կեանքի մէջ, կարող ենք ճանաչել այն վտանգները, որոնց ենթարկւում է մարդու ազնուութիւնը, այն փորձութիւնները, որոնք գրաւում են երիտասարդքին իրանց հրապուրիչ, բայց վատ կողմով: Հարկաւ, այն ժամանակ, մենք կարող ենք ունենալ աւելի առհաւատչեալ պաշտպանութեւն վատ օրինակներից, որովհետեւ կանխաւ իմացանք, որքան հնարաւոր է, նրանց իսկական արժէքը: Գիտենալով ռիտեղ է դարանը, գիտենալով ին-

չից պիտի վախենալ և ուր է թաղնուած վտանգը, գիտենալով թէ ինչպէս են կորել բազմաթիւ մարդիկ բարոյական իմաստով իրանց անձնավատահութեան պատճառով, մենք առաջուց կարող ենք կազմել մեզ համար այսպէս առած, ծրագիր — ինչպիսի ճանապարհով կարող ենք մենք մեզ առողջ պահել հասարակութեան մէջ եղած բարոյական հիւանդութիւններից: Երկար քննելով այս հարցերը կանխապէս մտածուած սովորների պատճառաւ՝ մենք կարող էինք մեր լաւ դաստիարակների շնորհիւ ամրապնդուել մեր համոզմունքների մէջ և պահպանել մեր արժանաւորութիւնները, այսինքն չը զոհելով այդ արժանաւորութիւնը վատ տպաւորութիւնների ու հրապոյրների: Եթէ մենք կը սովորենք կեանքի մասին խորհրդածել, եթէ մենք կիւրացնենք մարդկութեան ամենալաւ սկզբունքները, այն ժամանակ մեզ պատահած անբարոյական օրինակները կարող են ջարդուել այն բարոյական կանոնների շնորհիւ, որոնցմով մենք զինուէցինք, սպասելով վտանգների:

Երբ մենք պատրաստուում ենք ճանապարհորդել աշխարհի շուրջը կամ մի ուր և է երկիր, այդ դէպքում մենք նախօրօք պատրաստուում ենք բարտեղներով, մարշալներով, գրքերով և ամեն տեսակ անհրաժեշտ տեղեկութիւններով: Դէնց այդպէս էլ աշխատում ենք վերստին կարգաւ համապատասխան հեղինակութիւններ, հարկաւ այն նպատակով, որ մեր ճանապարհորդութիւնը լինէր որքան հնարաւոր է՝ լաւ, յարմար, ճիշտ և անվտանգ: Դրանից յետոյ մինչև որ աստիճան մեզ անհրաժեշտ է նախատեսել

այն թշուառութիւնները, այն յիմարութիւնները և հրապոյրները, այն անբախտութիւններն ու սխալմունքները, որոնք կարող են պատահել մեզ կեանքի մէջ՝ և որպէսզի նրանցից խուսափած լինինք, նախօրօք պիտի պատրաստուենք դիմաւորելու նրանց ամենայն սառնասրտութեամբ:

IV.

Ոչ որ մատաղ սերնդի բարոյական դարգացման միծ գործով զբաղուելու այնպիսի հնարաւորութիւն չունի, ինչպէս դպրոցը: Դպրոցի կառավարիչները լինում են և պէտք է լինեն ամենալուսաւորուած անձնաւորութիւնները և հէնց դրա համար էլ՝ ռի արդեօք, եթէ ոչ այդ մարդիկ կարող են ուղղել ամենալաւ իմաստով միաժամանակ մարդու կրթութեան հետ և նրա բարոյական դաստիարակութիւնը: Ուրեք արդեօք կարող են աւելի լաւ օգտուել հոգեբանական օրէնքով, եթէ ոչ այդ մարդիկ, որոնք աշխատում են հասնել իրանց որոնած նպատակին: Մտապառկերների սերտ կապակցութիւնն — ասում է պարոն Կապտերովը իր «Մանկավարժական հոգեբանութեան» մէջ. — տալիս է մանկավարժին ամենակարող միջոց սանիկի վրայ ազդելու: Մենք յաճախ պատահում ենք այդպիսի երևոյթների, որ դպրոցը անջնջելի կնիք է դնում սանիկի վրայ: Պատահում է մինչև անգամ, որ մարդ ցանկանում է ոչնչացնել դպրոցի ազդեցութիւնը, գտնելով նրան որ և է կէտում անյարմար, պայքար է մղում նրա դէմ և մնում է յաղթուած: Ուրիմն ինչո՞ւն է դպրոցի այդպիսի մնայուն ազ-

դեցութեան գաղտնիքը: Սերտ կապակցութիւնների փաստը տալիս է մեզ բացատրութիւն: Հանրակրթական միջնակարգ դպրոցում աշակերտութիւնը անց է կացնում հօթ--ութ տարի: Այս բաւականաչափ մեծ միջոց է առանձնապէս զարգացող օրգանիզմի համար:

Երևակայեցէք այժմ, որ բոլոր այդ ժամանակամիջոցում դպրոցը գործում է հետևողաբար, սխտեմատիկ կերպով՝ պատշաճութեամբ դպրոցի սաներին յայտնի սովորութիւններով, հակումներով և հայեացքներով: Միանման տալուց իրենց ընտրութեան շարունակաբար կրկնելը կարող է ստեղծել նշանակելի ու մնացուն կապակցութիւն: Ճշմարիտ է, կոնսերւատիւ կապակցութիւնների հնարաւորութիւնը մնում է, բայց երբ դաստիարակող անհատը կը նկատէ մի որևէ հայեացքի կեղծիքը, և երբ կեանքի մէջ անհրաժեշտութիւն կզգայ այդ սովորութիւններն ու հակումները, այն ժամանակ մի քանի տարուայ ընթացքում խնամքով դաստիարակուած հակումը զօրեղ ընդդիմութիւն ցոյց կը տայ, որին յաղթելը դժուար կը լինի, դրա համար չափազանց լուրջ ջանքեր են հարկաւոր, որոնք շատերի համար ոյժից վեր են: Այդ կերպով կամայ-ակամայ ամբողջ կեանքում պէտք կը լինի կրել դպրոցի կնիքը, ինչպէս տաժանակիր աշխատանքի դաստապարտուած ոճրագործը հին ժամանակները կրում էր նախատինքի դրոշմը: Ճշմարիտ է, նրանք ջնջուած էին և հարթուած ժամանակի ընթացքում միայն ջանքերի շնորհիւ, բայց փորձուած աչքը կարող էր ճանաչել նրանց նոյն իսկ զառամեալ ծերուկի վրայ, որ նոյնը և պատա-

հում է սխտեմատիկաբար երկարամեայ դպրոցական ազդեցութիւնների հետ. նրանք հնաճում են ժամանակի ընթացքում, թուլանում են ընդհարելով ուրիշ ազդեցութիւնների հետ, բայց երբէք չեն հարթուում:

«Տալով դաստիարակի ձեռքը այդպիսի զօրեղ դէնք,—շարունակում է Կապտերովը—բնականաբար դպրոցն իրաւունք ունի նրան պատասխանատու ճանաչելու այդ դէնքի գործածման վերաբերմամբ: Ոսկ այդ դէնքը ինչպէս և ամեն մի բան կարող է օգուտ կամ ֆլաս պատճառել: Ինչպէս որ կանոնաւոր հայեացքը և լուսսովորութիւնը համարեայ կարող են անջնջելի մնալ, այդպէս էլ վատ հակումը և կեղծ հայեացքը»:

Ձի կարելի չը համաձայնել Կապտերովի այս խօսքերի հետ: Դպրոցը, եթէ կամենայ, կարող է գտնել միջոց դնել իր սաների վրայ ազնութեան և ճշմարտախօսութեան ամենալուկնիքը, որովհետև, մարդու հոգին ընդունակ է իր յատուկ բնաւորութեամբ այդպիսի սկզբունքներն ըմբռնել: Լիովին արգարացի է այն ասացուածքը, թէ դպրոցը եթէ անընդունակ է դաստիարակելու, նա անշուշտ կանքարոյականացնէ այն բազմատեսակ աշակերտական տարրերի պատճառով, որոնք խմբուած են դպրոցում և որոնց դպրոցը չէ տալիս կանոնաւոր կրթական ուղղութիւն իրան գործը թիթեացնելու համար, այլ և այդ դժուար խնդիրը թողնում է ծնողների վրայ, որոնց մեծագոյն մասը, ինչպէս յայտնի է, պարունակում է իր մէջ այլ և այլ հակացողութիւնների, կարծիքների և ուղղութիւնների մի ամ-

բողջ քառս:

Հարցի այդպէս դրուելուն իբրև օրինակ
կարող են ծառայել Ամերիկայի դպրոցները, որ-
տեղ պարտականութիւն են համարում հոգալ ի-
րանց սաների բարոյական զարգացման մասին
և որտեղ բարոյական կանոնները իւրացւում են
ոչ թէ յիշողութեան, այլ մտածողութեան միջո-
ցով: Ամերիկական դպրոցների որպէս հիմնա-
քար ծառայում են ընթերցարանները, բարոյա-
կան բովանդակութիւնով գրքեր, որոնք կազ-
մուած են սխտեմատիկաբար և որոնց միջոցաւ
տրւում է հանրամարդկային և քաղաքացիական
բարոյական դաստիարակութիւն: Այդ բարոյա-
կան բովանդակութիւնով հատւածների վերլու-
ծութիւնը ըստ ընթերցարանի՝ նպատակ ունի
նախ հասկացնել մանուկներին իրանց բարոյա-
կան պարտաւորութիւնները, երկրորդ՝ յարուցա-
նել նրանց մէջ հայրենասիրական զգացմունք,
երրորդ՝ իւրացնել կրօնական տրամադրութիւն-
ներ, և վերջապէս, այդպիսի հատուածների մի-
ջոցաւ դադափար կազմել տալ աստուածային բա-
րութեան, սիրոյ և խմաստութեան վերայ: Ամե-
րիկացիները մեծ նշանակութիւն են տալիս բա-
րոյական հասկացողութիւնների և հակումների
զարգացման և մանկավարժական խորհուրդը
իւրաքանչիւր դասարանում այդ առարկայի հա-
մար յատկացրել է որոշ ժամեր:

Ամերիկայում ուսուցիչը բերանացի ուսու-
ցումը գրքի է փոխարինում: Ուսման ընդլի-
նւորման հետ և դասերը վաղօրօք մտածուած
գրոյրցներ:

Ամերիկայի ուսումնարանների բարոյական

օրինագրքի և հերոսական դպրոցներում դրուած
այդ կարգի հարցերի մէջ՝ տարածախնութիւնը
շատ չնչին է: Խնդիրը կայանում է առաքինու-
թիւնները զարգացնելու և արատները արմատա-
խիլ անելու մէջ: Արատների մէջ նշանակուած
են՝ ստութիւն, խաբէութիւն, հակումն դէպի գո-
ղութիւն, խստասրտութիւն դէպի կենդանիները,
չարութիւն և անարդարութիւն, բռնութիւն ու
կռուարարութիւն, անամօթութիւն ու ծուլութիւն,
անվճռականութիւն, այսօրուայ գործը վաղուան
թողնելը և մեծամտութիւն: Առաքինութիւնների
մէջ նշանակուած են՝ հաւատարմութիւն, ճարու-
թիւն, ջանասիրութիւն, օրէնքներին հպատակու-
թիւն, երախտագիտութիւն, տուած խօսքին կամ
խոստման հաւատարիմ մնալ և հայրենասիրու-
թիւն:

Բարոյական դաստիարակութեան ուսման
ընթացքն Ամերիկայում շարունակւում է մինչև
ինը տարի՝ սկսելով շաբաթական երկու դաս,
յետոյ շաբաթական մէկ դաս: Այդ դադմունքնե-
րը ունենում են այն կրթական հետեւանքը, որ
օրիորդներն ու պատանիները ճիշտ գաղափար
են կազմում պարտքի, պատուի, աշխատանքի,
օրինաւորութեան մասին՝ այսինքն ինչպէս պի-
տի պահել իրանց ընտանիքում, տանը, տանից
դուրս, եկեղեցում, հասարակութեան մէջ և այլն:

Ամերիկական կրթութիւնը տալով ամենա-
անհրաժեշտ գիտութիւնը կեանքի ու մարդու
մասին, մի կողմից պատրաստում է բարձրագոյն
դպրոցներին համար, միւս կողմից հիթէ կեանքի
հանգամանքները արգելում են յաճախել այդ
դպրոցները, ցոյց է տալիս ինքնադաստիարա-

կութեան և ինքնակրթութեան ուղիղ ճանապարհը, խելօք քաղաքացի և առաքինի մարդ լինելու համար *):

Անհնարին է չը համակրել ամերիկական դպրոցների բարոյական դաստիարակութեան այդպիսի սխտեմին և չըցանկանալ այդ օրինակ բան մեր դպրոցների համար էլ: Բայց կարող են ի նկատի առնել այն հանգամանքը, որ մեզանում անհրաժեշտ գիտութիւնները իւրացնելուց յետոյ, հազիւ բաւականան ուսումնական ժամերը բարոյական համոզմունքներ վարդացնելու գործին:

Մենք չը պէտք է դատենք՝ ինչպէս և ինչ կերպով ամերիկական դպրոցները գտնում են ժամանակ այդ օրինակ պարապմունքների համար: Կասենք միայն, որ թէև բոլոր գիտութիւնները օգտակար են, բայց չէ կարելի սակայն չը համաձայնել, որ այդ գիտութիւններից մի քանիսն աւելի անհրաժեշտ և աւելի օգտակար են, քան թէ միւսները, հետեաբար այս կամ այն գիտութիւնը ձեռք բերելու համար պէտք է ի նկատի ունենալ նրա օգտակարութեան և անհրաժեշտութեան չափը կամ աստիճանը: Ամեն մի անհատ, որ կզել է դպրոցում, անկարելի է որ նա չիմանայ բրիտոնէական կրօնի դաւանութիւնը կամ բերականական կանոնները, կամ միւս անհրաժեշտ գիտելիքները: Բայց երեւակայեցէք, որ շատերը, որոնք գիտաւորութիւն չունին լինել կենդանաբան, բուսաբան և կամ հանքաբան, իրանց ուսման ընթացքն աւարտելով, չեն կարող յիշել բոլոր կաթնասուն կենդանիների

րի անունները, և կամ չը պիտի յիշեն փշալողակ ձկների կամ կակղամորթ գլխոտանիների, կամ բոյսերից,—թիթեռնածաղիկների, մոշոշների, կորիզաւորների և այլոց անունները և կամ չը պէտք է գիտենան հանքերի դասաւորութիւնը, կամ վերջապէս անկարող պիտի լինեն նկարագրել մեր կատուին այնպէս, ինչպէս նա կադմուած է՝ օրինակի համար Գրիգորեւի նկարագրական կենդանաբանութեան մէջ, որը նշանակուած է մեր իգական գիմնագիտների համար,— նկարագրութիւնները, որը բռնում են մէկ ու կէս երես ամենասեղմուած տպագրական տառերով.—հարց է ծագում. ի՞նչ կարող է կորցնել աշակերտը, եթէ նա բերանացի չիմանայ բոլոր կենդանաբանական, բուսաբանական և հանքաբանական մանրամասնութիւնները: Եթէ առանձին բնածին հագումը որ և է մէկի մէջ ցանկութիւն է առաջ բերում լինել բուսաբան, կենդանաբան և հանքաբան, այն ժամանակ այդ ցանկացողը հարկաւ կուսումնասիրէ իր սիրած աւարկան մեծ հաճութեամբ, մեծ շահասիրութեամբ և յառաջադիմութեամբ, քան թէ կապել այդ գիտութիւնները միմիայն յիշողութեան միջոցաւ:

Իսկ եթէ հարկ է ունենալ հասկացողութիւն իսկապէս կրթութեան ակնկալութեամբ, բուսականութեան, կենդանաբանութեան և հանքաբանութեան մասին, այդ գէպքում բաւական չի լինիլ արդիօք միմիայն ուշադրութեամբ կարդալ այդ մասին, քան թէ բերանացի սովորել, քննութիւն բռնել, և ամենակարճ միջոցում դպրոցից դուրս գալուց յետոյ մոռանալ այդ տեղեկութիւնները, որոնք շատ քիչ են գործադր-

*) Мировольскій.

ւում կեանքի մէջ: Վերջապէս, եթէ այդ գիտութիւնները ուսուցւում են մտաւոր մարդութեան համար, ինչպէս որ ոմանք ասում են, այն ժամանակ բուսականութիւն կամ կենդանաբանութիւն և կամ հանքաբանութիւն սովորող մարդու զարգացած միտքը միայն կարելի է գործադրել համապատասխան այդ առարկաներին, բայց ոչ երբեք առօրեայ գործի, ոչ կանոնաւոր կեանքի և ոչ էլ աղնութեան զարգացման համար: Բայց որովհետեւ մարդկային արժանաւորութեան սկզբունքները նրա համար են, որ նա մարդ լինի, անհրաժեշտ են մեր կեանքի ամեն մի քայլափոփոխում այդպիսի բարձր նպատակի համար ժամանակ խլել այդ առարկաներից, որոնց ուսուցումը կարելի է կրճատել առանց մի բան կորցնելու այն ամենքի համար, որոնք չեն ցանկանում մասնագէտներ լինել և այդ ժամանակը գործ ածել կանոնաւոր կեանք ամենալաւ սկզբունքները զարգացնելու համար:

V.

Բարոյական ապականութիւնը ժամանակակից հասարակութեան մէջ այնքան մեծ է՝ լաւ և աղնիւ մարդկանց բացակայութիւնը այն աստիճան զգալի է, որ նոյնիսկ հասարակութիւնը ինքնուզուցութեան յոյսը համարեայ կորել է իսպառ և մինչև անգամ, եթէ այդ մասին խօսք էլ է լինում, միայն ծիծաղ է շարժում, որպէս անհնարին մի բան:

Բայց այդ անյուսալիութիւնը ոչ թէ անկարելիութեան մէջ է կայանում, այլ նրանումն է,

որ հասարակութեան մեծամասնութիւնը չի դարձնում և չի էլ կամենում ուշադրութիւն դարձնել ճշմարտութեան վերայ, որ մեր բարոյական զարգացումը լիովին կախուած է նրանից, որքան մենք այդ զարգացման մասին պիտի աշխատենք:

Եթէ մենք մեր երիտասարդութեան օրերում մեր դաստիարակների մասնակցութեան շնորհիւ ստացել ենք բարոյական զարգացում, հէնց այդ դէպքումն էլ մեր ինքնաձանաչութեան աղագայ զարգացումը խորհրդածութեան միջոցաւ. չափազանց կարեւոր է. այլ կերպ շարունակ կրկնուող աշխարհային զբաղմունքները և նիւթական կարիքների մասին եղած հոգսերը կարող են ընկճել մեր բարոյական ուղղութիւնը իրանց պահանջներով: Բայց երբ երկուստարգութեան օրերում այս կամ այն պատճառներով բնաւին չենք կարողացել իւրացնել այդ ուղղութիւնը, որը միշտ կարելի է, և երբեք ուշ չէ մեղ համար, և մինչև անգամ չափազանց անհրաժեշտ է այդ բարոյական կողմի զարգացումը՝ եթէ միայն մենք լաւ մարդ դառնալու ցանկութիւն ունենայինք: Հասարակութեան վերաբերմամբ այս նպատակին հասնելու համար պէտք է խորհելու այնպիսի մի առիթ գտնելն նրանք, որը տանէր նրանց դէպի լաւագոյն բարոյական զարգացումը: Առիթներ գտնելու գլխաւոր հոգսը հարկաւ ընկնում է ամենից առաջ եկեղեցու հովիւների վերայ: Բոլորին յայտնի Աւետարանի և Առաքեալների ցոյց տուած մեծագոյն պարտականութիւնները և այդ պարտականութիւնների ի կատար ածելը վաւերացրած սրբազան կառավարիչ Սինո-

դի ձեռով՝ 1881 թուականին ապրիլի 5-ին իր մէջ շրջաբերական հրամանովը խտրել պատուիրում է եկեղեցու հովիւներին՝ որպէս զի նրանք հոգ տանեն իրանց ժողովրդի մէջ Աւետարանի ճշմարտութիւնները տարածելու, որ նրանք—հովիւները և ուսուցիչները քարոզեն, դաստիարակեն, յանդիմանեն, արգելեն, խնդրեն և այլն: Դժբախտաբար, այդ մեծ շրջաբերականի ի կատար ածելու առթիւ չորոշուեց հսկելու մի աւելի յարմարաւոր միջոց և նա մնաց անկատար:

Ինչպէս յայտնի է, ինտելիգենտ հասարակութեան համար խորհելու սովորական առիթներն են՝ քաղաքական ու քաղաքացիական կեանքի անցքերը, այլ և այլ դէպքերը, մարդկանց կեանքից առած մասնաւոր պատահարները, յետոյ գրքերը, պարբերական հրատարակութիւնները, լրագրները, թատրոնները և այլն. իսկ ժողովրդի համար մնում է նոյն սահմանափակ շրջանը, նոյն զբաղմունքները, որոնց շուրջն է պտտում ժողովրդի մեծամասնութիւնը: Բայց այս բոլոր կենսական առօրեայ գործերի և անօգուտ ժամաւաճառութիւնների մէջ՝ բարոյական զարգացման առիթները հանդիպում են միայն պատահաբար, (այսինքն երբ մարդ մի լաւ օրինակ է տեսնում կամ մի որ և է լաւ գիրք է կարդում), այն ինչ հասարակութեան մէջ բարոյական զաղափարը բարձրացնելու համար բարոյական մտածողութեան առիթները պատահական չը պիտի լինին, այլ աւելի կամ պակաս չափով յարատեւող, որպէս զի նրանք ճշմարտապէս կարող լինէին ազդել հասարակութեան մէջ բարո-

յական համոզմունքների զարգացմանը: Հասարակական կեանքի մէջ անբարոյական երևոյթներին դիմադրելու և ընդհանրապէս զարգացնելու կամ վերանորոգելու բարոյական մտածողութիւնը՝ ամենալաւ միջոցը կարող է համարուել ինտելիգենտ հասարակութեան համար դասախօսութիւնները, իսկ ժողովրդի համար ընթերցանութիւնը: Դեռ շատ հին ժամանակներում գոյութիւն ունէր այն ճշմարտութիւնը, որ բարոյական օրէնքները պէտք է գրել մարդկանց հոգիների և սրտերի մէջ՝ իսկ դրան կարելի է հասնել միմիայն դասախօսութիւնների, ընթերցանութեան և ընդհանրապէս կենդանի խօսքի միջոցաւ: Ինչպէս յայտնի է, սովորական պատժական օրէնքները, որպէս նախազգուշացնող միջոցներ, արատների և յանցանքների դէմ անբաւարար են:

Ինչ բանի մասին որ կարգան մեզ, մենք այն մասին էլ պիտի մտածենք: Ուրեմն այն մարդիկ, որոնք վճռում են հոգալ հասարակութեան դաստիարակութեան մասին ըստ իրանց բարոյական զարգացման և կոչման, կամ իրանց պետութեան մէջ ունեցած գիրքի և ազդեցութեան շնորհիւ, կարող են ստիպել մեզ մտածելու այն բանի մասին, ինչ որ իրանք են ցանկանում:

Այն հարցը՝ թէ կարճը են արդեօք գտնուել խողներ այդ դասախօսութիւնները և ընթերցումները, այդ մասին մտածելն անգամ աւելորդ է: Ինչպէս որ մարդկային մարմինը շարունակ պահանջում է իր սովորական սնունդը, միտքն էլ նոյնպէս պահանջում է իր հոգեւոր սնունդը: Եթէ դասախօսութիւններ և ընթերցումներ հիմնողնե-

ըը հող տանէին այն մասին, որ այդ ընթերցողները արտայայտէին հանրամարդկային ճշմարտութիւններ և համապատասխանէին նրա: հասարակութեան կրթութեան աստիճանին, այն ժամանակ այդօրինակ ընթերցողները կամ դասախօսութիւնները կը գրաւէին մեծ թւով հասարակութիւն. եթէ, ընդհակառակն, այդ ընթերցողները կը լինին անիմաստ, անհասկանալի, չոր և առողջանութեան կողմից էլ ոչ պարզ լսողութեան համար, այն ժամանակ լսողների բացակայութեան պատճառը ակներև կը լինի, և այդ ընթերցողների հիմնադիրները պէտք է հողան դնել այդ դործը այնպէս, ինչպէս որ հարկն է:

Կաւ բովանդակութիւնով ընթերցողների ահադին օգուտը ամենքին յայտնի է: Եւ որովհետեւ մենք այդ ընթերցողներով ի նկատի ունենք հետամուտ լինել բարոյական նպատակներին, այն ժամանակ դասախօսութիւնների և ընթերցողների բովանդակութիւնը պէտք է որ համապատասխան լինէր ուղղակի այդ նպատակներին հասնելուն, և դրա համար դէպի բարոյական դարդացում տանող աւերթները մենք կը գտնենք ոչ թէ մեզ շրջապատող ընթերցան, այլ մարդկային հողեկան կեանքի մէջ. ուստի դասախօսութիւնների և ընթերցանութեան նիւթը գլխաւորապէս պիտի լինի այն նշանաւոր մարդկանց կեանքից վերցրած, որոնք նախանձախնդիր են եղել մարդկային արժանաւորութեան բարձր սկզբունքները գործադրելուն: «Մեծ մարդկանց կենսագրութիւններն, ասում է Դ. Լիւիսը, միշտ հարուստ են դասերով, միշտ ծառայել են իրրև զօրեղ խթան բարձր ձգտումների,—նրանց վրայ միշտ նայել

են որպէս զինարանի, ուր հաւաքուած են զէնքեր, որոնցմով տարել են մեծամեծ յաղթութիւններ»: Մի ուրիշ գրող—Ջոն Սաիւաբտ Բլէկլին ասում է. «Բարի և մեծ լինելու միակ միջոցն է փոքր հասակից ծանօթանալ մեծ մարդկանց կեանքի հետ: Ոչ մի քարոզ այնպէս խիստ չի ներդրում, ինչպէս մեծ մարդու կեանքը: Այստեղ մեծագործութիւնը բոլորովին մեր առաջն է և նա շարունակ կրկնում է բարձրաձայն:—Գնացէք, դուք էլ վարեցէք այնպէս: Եթէ դուք չէք կարող կատարել միևնոյն բանը, այն ժամանակ կարող էք կատարել դրա նման մի որ և է բան, կարող էք ձեր փոքրիկ ասպարեղում ցոյց տալ այնպիսի հաստատականութիւն և արիւթիւն, որ արժանի լինի գովասանքի: Ձեր երեակայութիւնը որքան կարելի է թող վաղ պատի բոլոր երկիրների ու ժամանակների պատկերասրահներում՝ այն ժամանակ նա շարունակ պիտի զրդռէ ձեզ ձգտել դէպի բարին և աչքի առաջ ունենալով դուք այդպիսի վկաների մի մեծ բազմութիւն, կամաչէք որ և է ցածութիւն գործելուց»: Հէնց այդպէս էլ Կիկերոնը գրել է, որ սխրագործութիւնների, բարձր օրինակների բովանդակութիւնը բարձրացնում է հողին, ազնուլացնում է սիրտը, ամրապնդում է կամքը և ուղղում է նրան դէպի բարձր նպատակները:

Ինչ բանի հետ շփուի մեր մտածողութիւնը, հէնց այդ էլ պիտի նպաստէ նրա զարգացմանը: Լսելով մի լաւ պատմուածք, կամ կարգալով լաւ մարդկանց կեանքի մասին, մենք ակամայ վարակւում ենք այդ լաւ մտքերով, և այդ միջոցաւ սակաւ առ սակաւ կարողանում ենք լաւ

լացնել այն համոզմունքները, որոնց մենք համակրում ենք:

Օրինակի համար, երբ մենք կը լսենք, թէ ինչպէս այլ և այլ մարդիկ աշխատանքի շնորհիւ հասել են գիտութիւնների, գեղարուեստի և դանազան արհեստների մէջ առանձին յառաջադիմութեան, այն ժամանակ դրանցից մէկն ընտրելով մեզ համար որպէս զբաղմունքի առարկայ, հաւանական է, որ կը մտածենք, չէ՞ կարելի արդեօք հասնել մեզ էլ եթէ ոչ հաւատար, գոնէ պակաս յառաջադիմութեան: Երբ մենք կարդում ենք մարդկանց բացառիկ դժբախտութիւնների մասին, նկատում ենք, որ շատերն աշխատել են դէպի այդ դժբախտութիւնները վերաբերուել հանգիստ, լուրջ և սառնարիւն կերպով՝ իսկ միւսները, ընդհակառակն շատ թեթեւամտութեամբ և անխոհեմ կերպով՝ մենք մեր մտքում հաւանելով առաջիններին և դատելով միւսներին, հէնց դրանցով էլ կազմում ենք մեզ համար որոշ դադարիւր, թէ նման դէպքերում ինչպէս պիտի վերաբերուել մեզ. և կը կանգնենք լաւ օրինակների վրայ:

Երբ կարդում են մեզ դանազան մարդկանց մասին, թէ ինչպէս նրանք անզբաւակի են մնացել ապնութեան մէջ և ձգտել են բարութեան իրականացման, ինչպէս ներողամտաբար են վերաբերուել դէպի ուրիշների սխալներն ու մոլորութիւնները, ինչպէս խորհրդածութեան միջոցով փնդրել են իմաստութիւն, որպէսզի իրանք էլ սխալներ չը գործեն.—հետեւապէս այդպիսի ընթերցումներն ու դասախօսութիւնները չեն կարող չազդել ուղղակի կերպով մարդու բարոյա-

կան զարգացման վրայ: Պէտք է ասել, որ այս ազդեցութիւնը չը պիտի սահմանափակուի միմիայն ընթերցարանով. նա պիտի անցնի աւելի հեռու,—այն ընտանիքների մէջ, որոնց պատկանում են այդ ունկնդիրները: Ընթերցումից կամ դասախօսութիւնից վերադառնալուց յետոյ ունկնդիրները մեր առօրեայ կեանքի ընդհանուր օրէնքին համաձայն, որ պահանջում է մտքերի փոխանակութիւն, ընթերցարանից դուրս բերած լաւ տպաւորութիւնները կը հաղորդեն իրանց ընտանիքի անդամներին:

Մի խօսքով մարդկային բնութեան լաւ կողմերը միայն այն ժամանակ են ստանում իրենց զարգացման սկզբնաւորութիւնը, երբ մենք այդ կողմերի նկատմամբ շարունակ մտքեր ենք զբաղում: Հետեւապէս բոլորը կախումն ունի նրանից, թէ մեր մէջ ինչպիսի մտքեր, և ճիշդան պիտի զրգուեն այս կամ այն դասախօսութեան կամ ընթերցման միջոցով: Սրանում, այսպէս ասած, նախապէս յղացած մտքերի զրոգումների ժամանակ՝ մեր գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնենք մեր մէջ եղած բնածին բարոյական սկզբունքների զարգացման վրայ, որոնք հասցնում են մարդուն իր արժանաւորութեան բարձրութեանը: Բոլոր ունկնդիրները, ինչպիսի համոզմունքի տէր էլ լինին նրանք, չեն կարող նոյն իսկ համաձայն մարդկային բնութեան չը համակրել ամին տեսակ բարութիւն, ազնւութիւն և արդարութիւն՝ նոյնպէս և բարոյապէս դադապացած մարդը մոլորութիւններ տեսնելիս չէ կարող չը տածել դէպի այդ ծանր ու անախորժ երևոյթները զղուանք և նողկանք: Բայց նմա-

նօրինակ բարոյական զարգացման յառաջադիմութիւն կամ իրականացում կարող են լինել միայն այն ժամանակ, երբ ուշադրութիւն դարձուած կլինի լաւ մտքերի, լաւ տպաւորութիւնների և ազդեցութիւնների քանակութեան վրայ: Եթէ օրինակի համար այս կամ այն հասարակութեան մէջ լինին տարին մէկ կամ երկու անգամ ընթերցումներ կամ դասախօսութիւններ, այն ժամանակ այդ հասարակութեան բարոյական զարգացումը երբեք առաջ չի գնալ՝ այնպէս, ինչպէս սինեակի խեղդուկ օդը չի կարելի թարմացնել գնդասեղի գլխի մեծութիւն ունեցող օդանցքով, կամ ինչպէս լսուած մի լաւ միտք չէ կարող ունենալ ոչ մի ազդեցութիւն միւս հարիւրուոր վատ մտքերի մէջ: Բայց թէ հասարակութեան մէջ դասախօսութիւնները կամ ընթերցումները կրկնուին մօտաւորապէս տարին յիսուն անգամ, այն ժամանակ նրանք անշուշտ իրանց լու ազդեցութիւնը կը թողնեն այդ հասարակութեան բարոյական զարգացման վերայ:

Մեր առաջ դրուած է երկու գլխաւոր հարց. մէկը մարդու մասին, իսկ միւսը—մնացեալ բնութեան:

Մարդու մասին եղած հարցը որպէս բանական արարածի, որ ունի իւր հոգու խորքում բարութեան, արդարութեան, սիրոյ բնածին սկզբունքներ, ակներև է, որ պէտք է համարուի ամենագլխաւորը բնութեան մնացած հարցերի հետ համեմատած. այս բնութեան մասին եղած հարցը պէտք է կապ ունենայ մարդու մասին եղած հարցի հետ, որը ճանաչում է բնութիւնը:

Թէև այս ճանաչողութեան շնորհիւ բնութեան մէջ եղած են, միշտ էլ լինում են մեր կեանքի յարմարութիւնների համար մեծամեծ գիւտեր, բայց այդ գիւտերը որքան էլ փայլուն լինէին, այնուամենայնիւ գոհացուցիչ չէին կարող լինել մարդու հոգեկան անդորրութեան և սրտ հետ միասին ամենահնարաւոր բաղաւորութեան համար էլ. մէկ կողմից մարդկային կեանքին ուղեկցում են հոգեկան վրդովմունքներ, որոնք շատ անգամ նրան ինքնասպանութեան են հասցնում, (իսկ այդ դրութիւնը կարելի է հեռացնել բոլորովին միայն, երբ մարդ իւրացրած կը լինի բարոյական բարձր սկզբունքները՝ որոնք միայն կարող են ազատել նրան ներկայ կեանքում բոլոր վրդովմունքներից). միւս կողմից—հասարակութեան պատմական կեանքի մէջ լինում են շրջաններ, երբ խախտում են բոլոր լաւագոյն հաւատալիքները, երբ որ կորչում է այն հողը, որի վրայ հասարակութեան անդամները պիտի համամիտ լինէին կեանքի գլխաւոր հարցերի մէջ, և որոնք վերջապէս պատճառ են դառնում մի շարք ամենաայնդակ վարմունքների: Այսպիսի խառնակ ժամանակում դէպի բարոյական սկզբունքներին դառնալը միայն կարող է հաշտեցնել կեանքի մասին բոլոր հայեացքները և փրկել հասարակութիւնը յաւիտենական կորստի:

Բարոյական զարգացումը ինչպէս ասում է Բոկլը, միմիայն չի կայանում բարոյական ճշմարտութիւնները լոկ գիտենալու մէջ՝ ինչպէս օրինակ բարիք գործել, ընկերին սիրել, արդարադատ լինել և այլն: Այս այբուբենական գի-

տութիւնից էլ աւելի պակաս լինէ կարող է լինել: Բարոյական դարգացումը կայանում է այն բարոյական համոզմունքների իւրացման մէջ, որոնք մարդուն հարկադրում են ձգտել այս աշխարհի վրայ բանականութեան միջոցաւ ստեղծագործելու ամենայն բարիք, լաւութիւն, ազնւութիւն և արդարութիւն:

Բարոյական կանոնների իւրացումը հպատակւում է ընդհանուր օրէնքին. որքան աւելի խորհնք մենք այդ կանոնների մասին, որքան բազմակողմանի կերպով հետազօտենք դրանց, և որքան խոր հաստատուն են նրանք մեր մէջ, այնքան էլ աւելի կարող են երևան հանել իրանց ոյժը մեր գործունէութեան առաքելիզում: Միայն բարոյական խորհրդածութիւնը,—ասում է Կունս Ֆիշերը—կարող է պահպանել մեզ վատ կրքերից և հրապոյրներից, միայն նա կարող է մարդկային հոգին անտարբեր դարձնել մահուան երկիւղի առաջ: Միայն բարոյական խորհրդածութիւնները Սոկրատէսին տուին հոգու պայծառութիւն, երբ նա խմում էր բաժակով թոյնը: Սոկրատէսը երբէք չէր կարող հասնել իր բարձր համոզմունքներին, եթէ արդարադատութեան մասին այնքան երկար չը մտածէր, եթէ այդ մշտեքերը աւելի ու աւելի չը շարունակուէին կուտակուել նրա մտքի և մտածողութեան մէջ, կազմէին այդ միջոցով զօրեղ ոյժ, որը իշխում էր միւս բոլոր մտքերի վրայ:

Մտածմունքը մեզ միշտ կողմնակից է դարձնում այն վարդապետութեան, որով զխառնապէս մենք զբաղուած ենք եղել: Ենթադրենք, թէ մի որ և է տեղում հիմնուած են եղել մի

քանի դպրոցներ կամ կրթական հաստատութիւններ և այդ հաստատութիւնների իւրաքանչիւրի մէջ ի միջի այլոց աւանդած են եղել փիլիսոփայական ուսմունք՝ ոչ միայն տարբեր միմեանցից, այլ և բոլորովին հակադիր միմեանց: Այդ կարգի ուսումնարանների զանազան ուղղութիւնները ինչպիսի հետևանք պիտի ունենային: Ակներև է, որ իւրաքանչիւր դպրոցից դուրս կը գային կողմնակիցներ իսկապէս այն ուսմունքի, որի մասին շարունակ մտքեր էին ներշնչում:

Շատ քչերը միայն այս կանոններից կարող են բացառութիւն կազմել:

Մի խօսքով՝ որքան աւելի մարդու մտքից անցնի լաւ տպաւորութիւններ, լաւ օրինակներ, լաւ մտքեր սեպհական կամ լսուած, կամ գրքերից առած և լիովին ճանաչուած, այնքան էլ բարձր պիտի լինի նրա բարոյականութիւնը՝ և ընդհակառակն, որքան մարդ աւելի գործ ունենայ անբարոյական օրինակների, դատողութիւնների և տպաւորութիւնների հետ, այնքան էլ աւելի առիթ կունենայ անբարոյական լինելու:

Մարդու բարձր իդէալը կայանում է ազնւութեան, արդարութեան, մեծահոգութեան, կանոնաւոր վարմունքի և խելացի ձգտումների մէջ: Որպէսզի մարդկանց տրամադրել ցանկանալ հասնելու ըստ կարելոյն այդ իդէալին, պէտք է աշխատել նախօրօք մտցնել նրանց ուղեղի մէջ այնքան բարոյական մտքեր, որպէս զի նրանք անպատճառ գերակշռող հանդիսանային անբարոյական մտքերի վրայ: Այս կամ այն գերիշխող մտքերի քանակութեան և հոգեբանական օրէնքի մէջ է պարունակում հարցի ամբողջ լուծումը:

Բարոյական իդէալների նկատմամբ շարունակ
մտքեր ներշնչելով հասարակութեան, կարելի է
սպասել նրա անդամներից ձգտում դէպի այդ
իդէալները, իսկ յետոյ և հասարակական կեան-
քում բարոյական օրինակների յայտնուելը:

Հասարակութեան անդամների վրայ այսպի-
սի բարոյական ազդեցութիւն պէտք է ունենան
անպայման եկեղեցու բոլոր հովիւները, բոլոր
դասախօսները և բոլոր դաստիարակներն ու դա-
սատուները, եթէ միայն իրանց պարտականու-
թիւնները գիտակցելու ընդունակ են, ջերմա-
գին ցանկանում են ուղղել մարդկանց մտածե-
լակերպը դէպի կեանքի ազնիւ կանոնները, բա-
րոյական սկզբունքները և ընդհանրապէս լաւ
մարդու բոլոր իդէալները:

Վ Ե Ր Զ.



ԳԻՆՆ Ի 25 ԿՈՊ.

1

Գրքի պահպանը գտնվում է թարգմանչի հոտ
Нахичевань на Дону, 25 линия, д. № 29
Свящ Н. Боснакианцъ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0212907

45.299

Ap

3-439a